ֆալախկան և նույնիսկ «ճվլեցաք, ասէ, զկզակս նոցին»։ Վարպետները խոստանում են նոր մաղ շինել՝ որից հետո լավ թուղթ կարտադրեն. և «սկսան նոր մաղ կաղմել զի այնու զլաւն հանցեն. հանցին և այնու, այն ևս չնմանեցաւ Ֆռանկստանու թղթոյն»։ (Նույն տեղ, էջ 582)։

Ֆրանսիացի վարպետների էջմիածնում մնալու անօգտավետությունը վերջնակատարես իմացվելուց հետո, նրանք վռնդվում են այնտեղից, ստանալով իրենց հասանելիք երեք տարվա աշխատավարձը։

Նախքան վերոհիշյալ վարպետները էջմիածին կհասնեին Սիմեոն կաթուղիկոսը վարպետներ էր խնդրել նաև Պարսկաստանից։ 1775 թ. հունիսի 28-ին ժամանել էին նաև Պարսկաստանից պահանջված պարսիկ վարպետները, որոնք հանդով ու բարեխղճորեն կատարելով իրենց աշխատանքը, կարճ ժամանակամիջոցում ոչ միայն կառուցել էին մի նոր գործարան, այլ և պատրաստել էին աշակերտներ (Նիկողայոս և Մարգար) և արտադրել լավորակ թուղթ։

Սխալվում է Գյուտ քահանա Աղանյանը, երբ գրում է, թէ «Սիմեոնը բերել տվեց այնտեղից (Պարսկաստանից) վարպետներ, բայց նոքա չկարողացան թուղթ շինել» (Դիվան Հայոց պատմ. գիրք գ. էջ ՃԿԳ)։ Հենց նույն Սիմեոն կաթուղիկոսը, Զաքիկյանցին ուղղված 1776 թ. դեկտեմբերի[1]) 6-ի նամակում՝ գանգատվելով թղթաշին ֆռանկ վարպետներից՝ գրել է. «Վերջապես այն էր չար միաքն սոցա (ֆռանկ վարպետների), զի այս արհեստս ասա մի յառաջացի. այլ քան զիւրեանց գիտեցեալն լաւ հաստատելոց է ասուածով, որպես Աիպն. լեր միամիտ... մինչև զոքա եատցան ի դէն ասա, մեք կարծէաք թէ՝ այլ ոչ դան, ուստի ի Քեարիմ խանէն զթղթաշինս խնդրեցաք։ Յետոյ հանկարծ եկին Ֆռանկքն, և նոքա ևս եկին, ուստի՝ այլ չկարողացաք ջուղապ առնէլ, այլ նոցա ևս շինել եատուք զգործարան, որք միաբանութեամբ շինեալ յաւարաս հասուցին, զթուղթ հանին, և զաշակերտս ուսուցին և դարձան... (որպես ասացաւ այս յապրելի 16), որոց թէ տարեկան վարձ՝ և թէ քեարխանի շինութեան և իւրեանց խարճ ընդամենն եղև ԱճԺ (110) թուման։ Տես զտոնկաց միամտութիւնն և զնոցին չարամտութիւնն, որք միշտ ծաղր առնէին նոցա. իսկ նոքա զիւրեանց յարաջացուցին որքան կարէին և Ֆռանկքն այսպէս նենգնութիւնս արարին» (նույն տեղ էջ 586—587)։

Բացի այս, նաև մի շարք վկայություններ կան թղթագործարանի ծախսերի մասյանում[2]), որոնցից մեկի մեջ բերումը ավելորդ չենք համարում «Ի սոյն ամի (1775 թ.), ի մարտի 22-էն, մինչև ցղեկտեմբերի 11. թէ Ֆռանկաց և թէ տոնկաց թղթատանն վերա այս ինչ խարճ գնաց, որ ահա ի ներքոյ գրի կարգաւ»։ Եւ այնուհետև թվարկվում են ծախսերը։

Պարզ է, որ էջմիածնում միաժամանակ հիմնարդվել է թղթի ոչ թե մեկ, այլ երկու գործարան, մեկը Ֆրանսիացի և մյուսը պարսիկ վարպետների ձեռքով. սրանցից մեծը, որ հավանաբար Ֆրանսիացի վարպետներն էին կառուցել 20 դաղ երկարություն և 9 դաղ լայնություն ուներ և կառուցված եր Զաքիկենց Գրիգոր աղայի ծախքով. պարսիկ վարպետների կառուցած արհեստանոցի տարածության մասին տեղեկություններ չկան։

Պատվավոր կերպով ավարտելով իրենց գործը՝ 1776 թվի ապրիլի 16-ին մեկնում են պարսիկ վարպետները։ Նույն թվի հոկ-

[1]) Դիվանում սխալմամբ՝ նոյեմբերի։

[2]) Այս մատյանը սեփականությունն է ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից Պետական Ձեռագրատան. (Արխիվի բաժին, Կաթուղ. դիվան, թղթապանակ 7, № 3) կաշեպատ է, փափուկ կազմով. 21,3 × 15, 5 սմ. մեծությամբ. բաղկացած է 104 թերթից։ 2—12 թերթերի վրա գրված է թղթագործարանների 1775—1781թթ. ծախսերը. կից 7 պատառիկ։ 23ա—26ա, 32ա—32բ և 36ա—46բ էջերում՝ ժամանակավոր օգտագործման համար միաբաններին և վարժատան սաներին հանձնված. այլ և այլ անձանց նվեր ուղարկված և վաճառված գրքերի ցուցակները (1781—1789թթ). կից 4 պատառիկ և մեկ ցուցակ կազմատան գործիքների։ 1ա. էջում՝ էջմիածնի միաբաններին և այլոց տրված ոսկեմանների ցուցակը (1416—1817 թ.)։ Կից ցուցակ՝ Թոխաթիենվիրակ Սիմեոն եպիսկոպոսից կաթուղիկոսին նվիրված իրերի։

42ա—46բ՝ 1816—1818 թվականների այլ և այլ եկեղեցիների ու վանքերի ուղարկված եկեղեցական անոթների և զգեստների ցուցակը՝ կից 2 պատառիկ։ Մնացած էջերը մաքուր են։